«ԻԼԴԱՐՈՒՆԻ» ՍՊԸ
Ք. Հրազդան, Անդրանիկի 44
ՀՎՀՀ 03027168
Հեռ՝ 041 210020

Ծաղկաձոր համայնքի ղեկավար
Ն. Հարությունյանին

Հարգելի՛ պարոն Հարությունյան

Կից Ձեզ ենք ներկայացնում «ԻԼԴԱՐՈՒՆԻ» ՍՊԸ-ի կողմից հաստատված ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30 ծածկագրով «Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի խաղահրապարակի կառուցման և դպրոցի բակի ցանկապատի և հենապատի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ»-ի մատուցման պետական գնման պայմանագիրը / 2 օրնակ/, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով:

Տնօրեն՝ Խ. Ավագյան

9.2.2 · 046
5112

Հավելված 6
«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30» ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N « ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30»

ք. Ծաղկաձոր «07 » օգոստոս 2023թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ն.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԻԼԴԱՐՈՒՆԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ.Ավագյանի**, որը գործում է համապատասխան կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***«Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի խաղահրապարակի կառուցման և դպրոցի բակի ցանկապատի և հենապատի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ»***-ի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 **Ծառայությունը մատուցվում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:**

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) **Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը.**

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: **Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ: Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:**

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 25 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***70000 (յոթանասուն հազար)*** << դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և << օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի

հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[2] **5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները:**

N	Խախտումը	Պատասխանատվությունը *
1	Կապալառուի կողմից շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն կամ ձեռք բերման պայմանագիր չունենալու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 6 տոկոսի չափով
2	Կապալառուի կողմից շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն չունենալու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից աղբի, կենցաղային թափոնների և օտար առարկաների չհեռացման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

	սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութի և հողի բերրի շերտի չտեղափոխման և հատուկ նախատեսված վայրերում չպահելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
5	Նախագծային փաստաթղթերով չնախատեսված դեպքերում ծառաթփային բուսականությունը հատելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չլինելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
7	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակների (ծրագծի սկզբում և վերջում) չտեղադրման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
8	Վտանգավոր տեղամասը չցանկապատելու, շինարարական տեղամասում ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն) չպահպանելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 6 տոկոսի չափով
9	Տեղամասերում կուտակված շինարարական աղբը, թափոնները հատուկ հատկացված վայրեր չտեղափոխելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում սանիտարական պայմանների չապահովման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցների բացակայության մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի կողմից հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) չկրելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) չպահպանելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով
14	Շինարարական նյութերը և թափոնները ծածկված բեռնատարներով չտեղափոխելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով

	հավաստում չտրամադրելը	
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չլինելու (ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 5 տոկոսի չափով

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ծաղկաձորի համայնքապետարան	«ԻԼԴԱՐՈՒՆԻ» ՍՊԸ
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9	Կոտայքի մարզ,ք.Հրազդան,Անդրանիկի
ՀՀ ՖՆ ԳՎ	փ.տ.44
ՀՎՀՀ 03027029	ՀՎՀՀ 03028168
ՀՀ 900122000046	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան	Հ/Հ 163158058336
/ստորագրություն/	Տնօրեն Ս.Ավագյան
Կ.Տ.	(ստորագրություն)
	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«02» օգոստոս 2023թ. կնքված
ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30 ծածկագրով պայմանագրի

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	71351540	***«Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի խաղահրապարակի կառուցման և դպրոցի բակի ցանկապատի և հենապատի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ»***	դրամ	70000	1	Ծաղկաձոր համայնք, ք.Ծաղկաձոր, Մայիսյան 15	Շինարարական աշխատանքների կատարման սկիզբ- շինարարական աշխատանքների կատարման ավարտ

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ

Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ

1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի կառուցման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:

2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:

3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝

• շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,

• ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին,

• Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,

• ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,

• ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,

• վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,

• ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար:

Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, • կատարել որակի և քանակի ամենօրյա հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում,

• շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,

• հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,

• կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),

• կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,

• շինարարության ավարտից հետո Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները,

• Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները:
• պարտադիր ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ով նախատեսված ծածկման շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում:

Հաշվետվության ներկայացման պահանջներ

Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների վերաբերյալ ընթացիկ և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:

Ավարտական հաշվետվությունը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական փաստաթղթեր, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, նախքան շինարարության սկիզբը, ինչպես նաև ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ:

Ընթացիկ հաշվետվությունները նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:

Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվետվությունների չներկայացնելու դեպքում վճարումներ չեն կատարվի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ծաղկաձորի համայնքապետարան	«ԻԼԴԱԲՈՒՆԻ» ՍՊԸ
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9	Կոտայքի մարզ,ք.Հրազդան,Անդրանիկի փ.տ.44
ՀՀ ՖՆ ԳՎ	ՀՎՀՀ 03028168
ՀՎՀՀ 03027029	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 900122000046	ՀՀ 1631580053336
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան	Տնօրեն Ռ.Ավագյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«07» օգոստոս 2023թ. կնքված
ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հիմնական նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդ ամենը
1	71351540	«Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի խաղահրապարակի կառուցման և դպրոցի բակի ցանկապատի և հենապատի բարեկարգման աշխատանքների դրանի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ»	0	0	0	0	0	0	0	0	0	70000	70000	70000	70000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
ՀՀ 900122000046
Համայնքի ղեկավար՝ Ն.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԹԼԴԱՐՈՒՆԻ» ՍՊԸ
Կոտայքի մարզ,ք.Հրազդան,Անդրանիկի փ.տ.44
ՀՎՀՀ 03028168
«ՀԱՅԿՈՆՈՒՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163158053336
Տնօրեն՝ Խ.Ավագյան

(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան, 2301,
Կենտրոն թաղ.Սահմանդր.հր.թ2/3
Հեռ.՝ +374223 21-298
Տեղեկատու՝ 86-86
էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
HRAZDAN BRANCH
Kentron. dis.,Constitution square,dis. 2/3
2301, Hrazdan Republic of Armenia
Tel.: +374223 21-298
Call Center: +3741 08000-8686
E-mail.: bank@aeb.am
www.aeb.am

16315-01/107

04.08.2023թ.

«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30»* ծածկագրով

Գնանշման հարցման հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30-2

(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԻԼԴԱՐՈՒՆԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 140.000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900125003393 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5 .Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30» ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 05.02.2024թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ

<<ՀՐԱԶԴԱՆ>> ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ

ԿԱՌԱՎԱՐՉԻ Ժ/Պ Ա. ՄԱՆԱՍՅԱՆ _____

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Կ.ԵՐՎԱՆԴՅԱՆ _____

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան, 2301,
Կենտրոն թաղ.Սահմանդր.հր.թ2/3
Հեռ.՝ +374223 21-298
Տեղեկատու՝ 86-86
Էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
HRAZDAN BRANCH
Kentron. dis.,Constitution square,dis. 2/3
2301, Hrazdan Republic of Armenia
Tel.: +374223 21-298
Call Center: +3741 08000-8686
E-mail.: bank@aeb.am
www.aeb.am

16315-01/106

04.08.2023թ.

«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30»* ծածկագրով

Գնանշման հարցման հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30-1

(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԻԼԴԱՐՈՒՆԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 93.000 (իննսուներեք հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900125003393 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 03.06.2025թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/30» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ

<<ՀՐԱԶԴԱՆ>> ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ

ԿԱՌԱՎԱՐՉԻ Ժ/Պ Ա. ՄԱՆԱՍՅԱՆ _____

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Կ.ԵՐՎԱՆԴՅԱՆ _____